

# ՍԱՂՄՈՍ 7

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

| NASB  | NKJV   | NRSV  | TEV                     | NJB                         |
|---|--|---|-------------------------|-----------------------------|
| Աղաչանք Տիրոջը պաշտպանելու սաղմոսերգուին ամբարիշտներից <u>MT նախաբան</u> «Դավթի խորհրդածությունը Բենիամինի ցեղից Քուշի խոսքերի առթիվ» | Աղոթք և փառաբանություն թշնամիներից ազատվելու համար | Անձնական թշնամիներից ազատագրման աղոթք (ողբ) | Աղոթք արդարության համար | Հավածանքի մեջ արդարի աղոթքը |
| 7:1-2   | 7:1-2  | 7:1-2                                       | 7:1-2                   | 7:1-5                       |
| 7:3-5   | 7:3-5  | 7:3-5                                       | 7:3-5                   |                             |
| 7:6-11  | 7:6-8  | 7:6-8                                       | 7:6-9                   | 7:6-8ա<br>7:8բ-9            |
|   | 7:9-10   | 7:9-11                                      | 7:10-13                 | 7:10-12ա                    |
|   | 7:11-13  |   |                         |                             |
| 7:12-16   |  | 7:12-16                                     |                         | 7:12բ-14                    |
|   | 7:14-16  |   | 7:14-16                 | 7:15-16                     |
| 7:17  | 7:17   | 7:17  | 7:17                    | 7:17                        |

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 7:1-2**

**1**Ո՛վ իմ ՏԵՐ Աստված, Քո վրա է իմ հույսը,  
Փրկի՛ր ինձ բոլոր հալածողներից ու ազատի՛ր ինձ,  
**2**Զլինի թե նա իմ անձը հափշտակի առյուծի պես  
Ու հռչոտի, և ազատող չլինի:

**7:1** «Քո վրա է իմ հույսը» /անգլ.՝ ես ապաստարան եմ գտել Քո մեջ/ Այս ԲԱՅԸ (BDB 340, KB 337) *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ է, որը մատնանշում է ավարտուն կամ կատարված գործողություն: Սաղմոսերգուն ուներ և շարունակում էր փնտրել ապաստարան (այսինքն՝ պաշտպանություն, հոգաժուրություն, ապահովություն) ՅԱՀՎԵԻ մեջ:

❖ Սաղմոսերգուն խնդրում է Աստծուն՝

1. փրկել իրեն – BDB 446, KB 448, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. ազատել իրեն – BDB 664, KB 717, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

քանի որ Նրա մեջ է գտել իր ապաստարանը (BDB 340, KB 337, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ): Սա պարբերաբար կրկնվող թեմա է. տես՝ Սաղմ. 2:12, 5:11, 7:1, 11:1. 16:1, 17:7, 18:2,30, 25:20, 31:1,19, 34:8, 22, 36:7, 37:40, 57:1, 61:4, 64:10, 71:1, 118:8,9, 141:8, 144:2: ՅԱՀՎԵՆ միակ ճշմարիտ պաշտպանության և հանգստի վայրն է:

### ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԿ տերմին)

**7:2** Սաղմ. 7:1-ում սաղմոսերգուի հակառակորդները կոչվում են «նրանք, որ հետապնդում են ինձ»: Սաղմ. 7:2-ում նրանք նկարագրվում են որպես հռչոտող կենդանի (տես՝ Սաղմ. 57:4):

1. հափշտակել – BDB 382, KB 380, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 17:12
2. հռչոտել – BDB 830, KB 973, *Qal* ԴԵՐԲԱՅ
3. ազատող չլինի – սա հակասում է Սաղմ. 7:1, որտեղ սաղմոսերգուն աղերսում է ՅԱՀՎԵԻՆ ազատության համար: Ոչ ոք, բացի Աստծուց չի կարող ազատել:

Սաղմոսերգուն կամ կիրառում է ակնառու փոխաբերություններ կամ վախենում է դաժան ֆիզիկական հարձակումից իր թշնամիների կողմից:

### **ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՌՅՈՒԾՆԵՐԸ ՀԿ-ՈՒՄ (BDB 71, KB 87)**

#### **SPECIAL TOPIC: LIONS IN THE OT (BDB 71, KB 87)**

Հաճախ անհատի կամ ազգի գորությունը նկարագրվում է առյուծի՝ կենդանիների արքայի կերպարով:

1. Հուդան՝ Ծննդ. 49:9, Միքիա 5:8
2. ՅԱՀՎԵՆ Իսրայելի համար՝ Թվոց 24:9, Ես. 31:4, 35:9, Ովս. 11:10
3. Իսրայելը որպես պարտված առյուծ՝ Եզեկիել 19
4. Դանի ցեղը՝ 2 Օրինաց 33:22
5. Դավթի ուժը առյուծների վրա՝ 1 Թագ. 17:34-37
6. Սավուդն ու Հովնաթանը՝ 2 Թագ. 1:23
7. Սողոմոնի գահի սիմվոլիկ պահապանները՝ 3 Թագ. 10:19-20
8. Աստված օգտագործում է առյուծներին որպես պատիժ՝ 3 Թագ. 13:20-28, 20:36, 4 Թագ. 17:25-26, Եսայի 15:9, փոխաբերություն Հոբ 4:10-ում և Երեմ. 2:30, 49:19, 50:44, Ողբ. 3:10, Ամոս 3:4,8,12, 5:19, Ովս. 5:14, 13:7-8, Նաում 2:11-12
9. Դավթի թշնամիները նկարագրված որպես առյուծներ, որոնցից Աստված ազատելու է նրան՝ Սաղմ. 7:2, 10:9, 17:12, 22:13,21

10. անհայտ չարի համար օգտագործվող փոխաբերություն՝ Առակ. 22:13, 26:13, 28:15
11. Բաբելոնի բանակի նկարագրություն՝ Երեմ. 4:7, 49:19-22, 51:38
12. Աստծո ժողովրդի դեմ ազգերի բանակը՝ Երեմ. 5:6, 25:32-38, 50:17, Հովել 1:6
13. Ինչպես էր Աստծո ժողովուրդը վերաբերվում Նրան՝ Երեմ. 12:8
14. Ինչպես են Աստծո առաջնորդները վերաբերվում ժողովրդին՝ Եզեկ. 22:25, Սուփ. 3:3
15. թագավորի բարկության մասին փոխաբերություն՝ Առակ. 19:12, 20:2
16. աստվածավախ մարդու մասին՝ Առակ. 28:1:
17. Մեսիայի մասին փոխաբերություն՝ Ծննդ. 49:9, Հայտն. 5:5
18. Կետ 11 և 12-ի լույսի ներքո կիրառված Երեմիայում, Դանիելի փոխաբերությունը Բաբելոնյան գործի համար որպես արագ շարժվող առյուծ: Արգասաբեր Մահիկի կայսրությունները օգտագործում էին հաճախ առյուծներին որպես ազգը խորհրդանշող կենդանի (օրինակ՝ թևավոր առյուծները Բաբելոնի Իշթարի Դարպասի վրա):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 7:3-5**

<sup>3</sup>Ո՛վ իմ ՏԵՐ Աստված, եթե արել եմ այս *բանը*,  
 Եթե իմ ձեռքերում անիրավություն կա,  
<sup>4</sup>Եթե չարությամբ եմ հատուցել ինձ հետ խաղաղությամբ ապրողին  
 (հիրավի, ես ազատել եմ նրան, որ առանց պատճառի իմ թշնամին է).  
<sup>5</sup>Այս թող թշնամին հալածի իմ անձը և հասնի *ինձ*  
 Ու երկրի վրա կոխկրտի իմ կյանքը,  
 Եվ իմ պատիվը հողին հավասարեցնի: Սեյա:

**7:3-5** Սաղմոսերգուն ստեղծում է հիպոթետիկ գուգահեռ իրավիճակներ:

1. եթե արել եմ այս բանը (սակայն «այս» խոսքը չի արժարժվում)
2. եթե իմ ձեռքերում անիրավություն կա (այսինքն՝ գործողություններ, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌՔ ստորև)
3. եթե չարությամբ եմ հատուցել ընկերոջս (սա հնարավոր է հայտնի առակ է, տես՝ Առակ. 20:22, 24:29, Հռոմ. 12:17):
4. եթե կողոպտել եմ իմ ընկերոջն առանց պատճառի  
 Եթե սրանցից որևէ մեկը ճիշտ է, ապա՝
  1. թող թշնամին հալածի իմ անձը – BDB 922, KB 1191, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
  2. թող թշնամին հասնի ինձ – BDB 673, KB 727, *Hiphil* ՀԱՅՑԱԿԱՆ
  3. թող թշնամին երկրի վրա կոխկրտի իմ կյանքը – BDB 942, KB 1245, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
  4. իմ պատիվը հողին հավասարեցնի – BDB 1014, KB 1496, *Hiphil* ՀԱՅՑԱԿԱՆ («պատիվ, փառք» խոսքը մարդու կյանքի բովանդակության իմաստով է, տես՝ Սաղմ. 16:9, 30:12, 57:8, 108:1):

Սա անմեղությունը հաստատելու բանաստեղծական կերպ է:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌՔ (ԼՈՒՍԱԲԱՆՎԱԾ ԵՉԵԿԻԵԼԻՑ)  
 SPECIAL TOPIC: HAND (ILLUSTRATED FROM EZEKIEL)**

«Ձեռք» բառը (BDB 388, KB 386) ունի մի քանի նշանակություն և կիրառություն:

1. բառացի (այսինքն՝ մարդու ձեռք)
  - ա. ամբողջ անձի խորհրդանիշը՝ Եզեկ. 3:18, 18:8, 17, 33:6,8
  - բ. մարդու տկարության խորհուրդը՝ Եզեկ. 7:17, 27, 21:7, 22:14

- գ. օտար թշնամիների խորհրդանիշը՝ Եզեկ . 7:21, 11:9, 16:39, 21:31, 23:9,28, 28:10, 30:12, 34:27, 38:12, 39:23
- դ. հենց ձեռք՝ Եզեկ . 8:11, 12:7, 16:11, 37:17,19,20
- ե. սուտ առաջնորդների իշխանության խորհրդանիշը՝ Եզեկ . 13:21, 22, 23, 34:10
- զ. ազգի խորհրդանիշը՝ Եզեկ . 23:31,37,42,45, 25:14, 27:15, 28:9, 30:10, 22, 24, 25, 31:11, 39:3
2. աստվածության մարդաբանություն
- ա. ՅԱՀՎԵԻ հայտնություն տալը՝ Եզեկ . 1:3, 3:14, 22, 8:1, 33:22, 37:1, 40:1 (2:9-ը հայտնության մեկ այլ նկարագրություն է՝ ձեռքի մեջ գալարը)
- բ. ՅԱՀՎԵԻ իշխանությունը դատաստանի մեջ՝ Եզեկ . 6:14, 13:9, 14:9,13, 16:27, 20:33, 25:7,13,16, 35:3, 39:21
- գ. ՅԱՀՎԵՆ Ինքը (անձնապես Նրա ներկայությունը)՝ Եզեկ . 20:22
- դ. ՅԱՀՎԵԻ ազատելու գորությունը՝ 20:34 (հավանաբար Ելիցում հիմնական կիրառությունը, տես՝ 3:20, 4:17, 6:1, 7:19, 13:3)
3. *Քերովքների* մարդաբանություն՝ Եզեկ . 1:8, 8:3, 10:7,8,12,21
4. կործանող հրեշտակների մարդաբանություն՝ Եզեկ . 9:1-2, 21:11
5. գրավի կամ երդման խորհրդանիշ՝ Եզեկ . 17:18, 20:5 (երկու անգամ), 6,15,23,28, 36:7, 44:12, 47:14
6. ուրախության խորհրդանիշ՝ Եզեկ . 25:6
7. հրեշտակի մարդաբանություն՝ Եզեկ . 40:3,5, 47:3

**7:5 «Սելա»** Տե՛ս Սաղմ . 3:2-ի գրառումը և Սաղմոսների ներածություն, VII.

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 7:6-11**

<sup>6</sup>Ելի՛ր, ո՛վ ՏԵՐ, Քո բարկությամբ,  
 Բարձրացի՛ր իմ թշնամիների կատաղության դեմ .  
 Հանուն ինձ արթնացի՛ր Քո սահմանած դատաստանի համար:  
<sup>7</sup>Այդպես ժողովրդի հավաքը շրջապատելու է Քեզ,  
 Հանուն նրանց վերադարձի՛ր բարձունքներում:  
<sup>8</sup>ՏԵՐԸ պիտի դատի ժողովրդին .  
 Դատիր ինձ, ո՛վ ՏԵՐ՝ ըստ իմ արդարության  
 Ու իմ մեջ *եղած* անմեղության:  
<sup>9</sup>Օ՛, թող սպառվի ամբարիշտների չարությունը, իսկ արդարին հաստատի՛ր,  
 Քանի որ Դու սրտեր ու երիկամունք քննող ես, ո՛վ արդար Աստված,  
<sup>10</sup>Իմ պաշտպանությունն Աստուծոց է,  
 Ով փրկում է սրտով ուղիղներին:  
<sup>11</sup>Աստված դատում է արդարին,  
 Ու Աստված ամեն օր բարկացած է *մեղավորի* վրա:

**7:6-11** Սաղմոսերգուն կանչում է ՅԱՀՎԵԻ, որ գործի իր կողմից՝ իր համար .

1. ելի՛ր – BDB 877, KB 1086, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (տես՝ Սաղմ . 3:7-ի գրառումը): Այս ԲԱՅԸ կարող է նշանակել՝  
 ա. կանգնել և գործել մեր օգտին, որպես Դատավոր, Պատերազմող  
 բ. արթնանալ «ուշադրություն դարձնելու և գործելու» իմաստով (տես՝ Սաղմ . 44:23):
2. բարձրացի՛ր – BDB 669, KB 724, *Niphal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. արթնացի՛ր – BDB 734, KB 802, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ . 35:23, 44:23, 59:4
4. վերադարձի՛ր – BDB 996, KB 1427, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (կամ հասկացվում է որպես «բնակվի՛ր», BDB 442, տես՝ Սաղմ . 23:6):

5. դատի՛ր ինձ – BDB 1047, KB 1622, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 26:1, 35:24, 43:1  
ՅԱՀՎԵՆ կանչվում է բաց թողնելու Իր բարկությունը մեղքի դեմ և ցույց տալու Իր դատաստանը:  
Այս միտքը ամփոփվում է Սաղմ. 7:7-ում: Եբրայերենը բարդ է:

**JPSOA** **«թող ժողովրդի հավաքը շրջապատի Քեզ, Քո հետ, որ նստած ես  
բարձունքներում»**

**NJB** **«թող ազգերի հավաքը շրջապատի Քեզ. հանուն նրանց վերադար-  
ձի՛ր բարձունքներում»**

Հարց է առաջանում, թե «Ի՞նչ առնչություն ունեն «ժողովուրդները» այս համատեքստում՝  
անհատի արդարադատության հարցում»: Արդյո՞ք այս Սաղմոսը արդարություն է փնտրում ի դեմս՝

1. անձնական թշնամիների (Սաղմ. 7:6,8)

2. հեթանոս ազգերի (Աբդիա հ. 5)

Այն փաստը, որ Սաղմ. 7:8 սկսում է «ՏԵՐԸ դատում է ժողովուրդներին» խոսքով, վստահություն է  
ներշնչում տարբերակ 2-ի հանդեպ, սակայն այս համատեքստում այն ինչ-որ տեղ զարմանալի է:

**7:8 «ըստ իմ արդարության»** Այս արտահայտությունը պետք է թարգմանվի Սաղմ. 7:3-5-ի լույսի  
ներքո: Սաղմոսերգուն չի պնդում իր անմեղությունը, սակայն նա չի արել այն, ինչի մեջ մեղադրվում  
է:

Ուշադրություն դարձրե՛ք Սաղմ. 7:9, 17-ին, որտեղ ՅԱՀՎԵԻ արդարությունն է հիմնավորվում:  
Սաղմոսերգուն փափագում է այն օրվան, երբ Աստված ամեն բան իր կարգի մեջ կդնի, կհայտնի  
բոլոր մարդկանց իրական շարժառիթներն ու գործողությունները: Աստվածաշունչը հստակ ասում է,  
որ այս ֆիզիկական տիեզերքը ստեղծվել և պահպանվում է բարոյական Աստծո կողմից: Նրա  
պատկերով ստեղծված յուրաքանչյուր մարդ Նրան հաշիվ է տալու կյանքի պարզևհի՛ տնտեսության  
համար (տես՝ Մատթ. 25:31-46, Հայտն. 20:11-15):

❖ **«անմեղություն/կատարելություն»** Այս տերմինը (BDB 1070) նշանակում է «անարատություն»  
(տես՝ Սաղմ. 25:21, 26:1,11, 41:12, Առակ. 2:7, 10:9, 19:1, 20:7, 28:6): Սա անմեղության հայտա-  
բարություն չէ, այլ մաքուր մտքի/սրտի/շարժառիթի (տես՝ Սաղմ. 7:10բ): Տես՝ Հատուկ Թեմա. Անմեղ,  
անարատ, անսխալական, առանց նախատիների:

**7:9 «ամբարիշտների չարությունը»** Արդյո՞ք սա վերաբերում է նրանց, ովքեր մեղադրում էին  
սաղմոսերգուին Սաղմ. 7:3-5-ում կամ բոլոր մարդկանց՝ ազգերին (տես՝ Սաղմոս 2):

Սաղմոսերգուն կանչում է Աստծուն չարիքին վերջ տալու համար (BDB 170, KB 197, *Qal* ԱՆ-  
ԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով) և հաստատելու (BDB 465, KB 464, *Polel* ԱՆԿԱՏԱՐ)  
արդարություն (տես՝ Հատուկ Թեմա. Արդարություն):

❖ **«Գու սրտեր ու երիկամունք քննող ես, ով արդար Աստված»** Սա պարբերաբար կրկնվող  
թեմա է (տես՝ Սաղմ. 11:4-5, 17:3, 26:2, 66:10, 139:23, Երեմ. 11:20, 17:10, 20:12): Աստված գիտի սրտի  
շարժառիթները (BDB 480, բառացի՝ երիկամների. ստորին ներքին օրգանները համարվում էին  
զգացմունքների և բարոյական բնավորության տեղը):

**7:10-11** Հավատարիմ հետևորդի համար ՅԱՀՎԵՆ վահան է (տես՝ Սաղմ. 3:3-6-ի գրառումը), սա-  
կայն անհավատ հետևորդի համար՝ «արդար դատավոր» (տես՝ Սաղմ. 96:13):

**7:11 «վրդովված/բարկացած»** Այս ԲԱՅԸ (BDB 276, KB 277, *Qal* ԴԵՐԲԱՅ) Սաղմոսներում կարելի  
է գտնել միայն այստեղ: Այն մի քանի անգամ նշվում է Առակաց գրքում (տես՝ Առակ. 22:14, 24:24,  
25:23):

Այս համարը նկարագրում է ՅԱՀՎԵԻ (թե՛ *Էլշիիմ* և թե՛ *Էլ* անունները այս համարում Աստծո համար կիրառվում են) շարունակական արձագանքը մեղքի հանդեպ: Սա այն աշխարհը չէ, որը նա մտածել էր՝ ստեղծել էր: Ծննդոց 3 ունեցել է սարսափելի հետևանք՝

1. Աստծո վրա (տես՝ Ովսեա 11:1-4,8-9)
2. մարդկանց վրա (տես՝ Հռոմ . 3:10-18,23)
3. Ֆիզիկական ստեղծագործության վրա (տես՝ Հռոմ . 8:18-23):

Մեղքը ազդում է ժամանակի և հավիտենության վրա:

### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 7:12-16**

**12** Եթե նա ետ չդառնա, Իր սուրը սրած է.

**Աղեղը՝ լարված ու պատրաստ:**

**13** Նրա համար պատրաստել է մահվան գործիքները

**Հալածողների համար Իր նետերն է սահմանել:**

**14** Ահա անօրենության երկունքի մեջ է նա,

**Զարություն է հղացել ու կեղծիք ծնել:**

**15** Փոս է փորել և խորացրել,

**Բայց իր շինած փոսի մեջ ինքն է ընկնելու.**

**16** Նրա չարություն իր գլխին է գալու,

**Ու նրա չարագործությունն իր գագաթին է իջնելու:**

**7:12 «Եթե մարդը/նա ետ չդառնա/չապաշխարի»** Նկատել՝ պայմանական ուխտը: Նաև ուշադրություն դարձրե՛ք, որ ապաշխարությունը՝ հավատքի պես, ամբողջ կյանքի համար է: Տե՛ս ստորև տրված Հատուկ Թեման:

### **ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ SPECIAL TOPIC: REPENTANCE IN THE OLD TESTAMENT**

Այս հասկացությունը չափազանց կարևոր է, սակայն դժվար է այն սահմանելը: Մեզանից շատերը ունեն տարբեր սահմանումներ, որոնք գալիս են մեր հարանվանական ազդեցություններից: Սակայն ընդհանրապես մի «շարք» աստվածաբանական սահմանումներ հարկադրում են մի քանի Եբրայերեն (և հունարեն) բառերի, որոնք մասնավորապես չեն ենթադրում այս մի «շարք» սահմանումները: Պետք է հիշել, որ ՆԿ-ի հեղինակները (բացի Ղուկասից) եղել են հրեա մտածելակերպի մարդիկ, որոնք գործածում էին Կոինե Հունարեն լեզվի տերմիններ, ուստի մենք կսկսենք հենց Եբրայերեն տերմիններից, որոնցից հիմնականում երկուսն են կիրառվել՝

1. *nacham* (BDB 636, KB 688)
2. *shub* (BDB 996, KB 1427)

Առաջին տերմինը՝ *nacham*, որը բնագրում կարծես նշանակում էր «խորը շունչ քաշել», կիրառվում է մի քանի իմաստով՝

- ա. «հանգիստ» կամ «հարմարավետություն» (օր.՝ Ծննդ. 5:29, 24:67, 27:42, 37:35, 38:12, 50:2, հաճախ գործածվում է անունների մեջ, տես՝ 4 Թագ.15:14, 1 Մնաց.4:19, Նեեմ.1:1, 7:7, Նաումի 1:1)
- բ. «զղջում» (օր.՝ Ծննդ.6:6,7)
- գ. «մտափոխություն» (օր.՝ Ելից 13:17, 32:12,14, Թվոց 23:19)
- դ. «զթասրտություն» (օր.՝ 2 Օր. 32:36)

Նկատել՝, որ բոլոր այս բառերի մեջ կան խորը զգացմունքներ: Ահա բանալին՝ խորը զգացմունքներն են, որ դրդում են գործողությունների: Գործողության այս փոփոխությունը հաճախ ուղղված է լինում ուրիշների հանդեպ, բայց նաև Աստծո: Աստծո հանդեպ վերաբերմունքի և արարքների այս փոփոխությունն է, որ այս տերմինին հաղորդում է աստվածաբանական այսպիսի կարևորություն: Սակայն այստեղ պետք է հոգատարություն ցուցաբերվի: Ասվում է, որ

Աստված «զղջաց» (տես՝ Ծննդ.6:6,7, Ելից 32:14, Դատ.2:18, 1 Թագ.15:11,35, Սաղմ.106:45), սակայն սա մեղք գործելու կամ սխալ անելու հետևանք չէ, այլ գրականական ձև, որն արտահայտում է Աստծո գթասրտությունն ու հոգատարությունը (տես՝ Թվոց 23:29, 1 Թագ.15:29, Սաղմ.110:4, Երեմ.4:27-28, Եզեկ.24:14): Մեղքի և ապստամբության արժանի պատիժը ներվում է, եթե մեղավորը ճշմարտապես դարձի է գալիս իր՝ իրենց մեղքից և դառնում դեպի Աստծուն: Դա կյանքի արժեքների վերակողմնորոշում է:

Երկրորդ տերմինը՝ *shub*, նշանակում է «ետ դառնալ» (չրջվել ինչ-որ բանից, ետ շրջվել, շրջվել դեպի): *Shub* ԲԱՅԸ (BDB 996, KB 1427) հիմնականում նշանակում է «ետ դառնալ» կամ «վերադառնալ»: Այն կարելի է կիրառել՝

1. Աստծուց ետ դառնալու իմաստով - Թվոց 14:43, Ովս. 22:16,18,23,29, Դատ. 2:19, 8:33, 1 Թագ. 15:11, 3 Թագ. 9:6, Երեմ. 3:19, 8:4
2. Դեպի Աստծուն դառնալու իմաստով՝ 3 Թագ. 8:33,48, 2 Մնաց. 7:14, 15:4, 30:9, Սաղմ. 51:13, 116:7, Ես. 6:10, 10:21,22, 31:6, Երեմ. 3:7,12,14,22, 4:1, 5:3, Ովս. 3:5, 5:4, 6:1, 7:10,16, 11:5, 14:1,2, Ամովս 4:6,8-11 (հատկապես ուշադրություն դարձրեք Երեմիա 7 և Ամովս 4)
3. ՅԱՀՎԵՆ սկզբից ասել էր Եսայուն, որ Հուդան չի ապաշխարելու՝ չի կարող ապաշխարել (տես՝ Ես. 6:10), սակայն գրքում առաջին անգամ այդպես չի ասվում, այլ Նա կոչ է անում նրանց, որ դարձի գան դեպի Իրեն:

Ապաշխարությունը այնքան էլ զգացմունք չէ, որքան Աստծո հանդեպ վերաբեմունք: Այն կյանքի վերակողմնորոշում է սեփական եսից դեպի Աստծուն: Այն արտահայտում է փոխելու և փոխվելու հոժարակամություն: Այն ոչ թե մեղքի լիակատար դադարեցում է, այլ ամենօրյա գիտակցված ապստամբության դադարեցում: Այն Ծննդոց 3-ի Անկման եսակենտրոն հետևանքների ետադարձումն է: Այն մատնացույց է անում, որ Աստծո պատկերը և նմանությունը (Ծննդ. 1:26-27) թեև ապականվել էր, սակայն այժմ վերականգնված է: Մեղավոր մարդկության հաղորդակցությունը Աստծո հետ դարձյալ հնարավոր է:

ՀԿ-ում ապաշխարություն հիմնականում նշանակում է «գործողությունների փոփոխություն», մինչ ՆԿ-ում «ապաշխարություն» նշանակում է «մտածելակերպի փոփոխություն» (տես Հատուկ Թեմա. Ապաշխարություն [ՆԿ]): Այս երկուսն էլ անհրաժեշտ են ճշմարիտ աստվածաշնչյան ապաշխարության համար: Նաև անհրաժեշտ է գիտակցել, որ ապաշխարությունը թե՛ սկզբնական գործողություն է և թե՛ շարունակական ընթացք: Սկզբնական գործողությունը կարելի է տեսնել Մարկ. 1:15, Գործք 3:16 և 19, 20:21, մինչ շարունակական ընթացքը՝ 1 Հովի. 1:9, Հայտնություն 2 և 3: Ապաշխարությունը այլընտրանք չէ (տես՝ Ղուկ. 13:3,5):

Եթե ճիշտ է, որ ուխտի երկու պահանջներն են «ապաշխարությունը» և «հավատքը» (օր.՝ Մատթ.3:2, 4:17, Մարկ.1:4,15, 2:17, Ղուկ.3:3,8, 5:32, 13:3,5, 15:7, 17:3), ապա *nacham* տերմինը վերաբերում է մարդու իր մեղքը գիտակցելու խորը զգացմունքներին և ետ դառնալուն, մինչ *shub* տերմինը առնչվում է մեղքից շրջվելով դեպի Աստծուն դառնալը (այս երկու հոգևոր գործողությունների օրինակ է Ամովս 4:6-11, «դուք Ինձ չդարձաք» [իհնգ անգամ] և Ամովս 5:4,6,14 – «Ինձ փնտրեք... Տիրոջը փնտրե՛ք... փնտրեք բարին և ոչ թե չարը»):

Ապաշխարության գործության առաջին հրաշալի օրինակը Դավթի մեղքն է Բերսաբեի հետ (տես՝ 2 Թագավորաց 12, Սաղմոս 32:51): Դավթի կյանքում, նրա ընտանիքի և Իսրայելի կյանքում այդ մեղքի հետևանքները շարունակվեցին, սակայն Դավթի փոխհարաբերությունը Աստծո հետ վերականգնվեց: Նույնիսկ ամբարիշտ Մանասեն կարող է ապաշխարել և ներվել (տես՝ 2 Մնաց.33:12-13):

Այս երկու տերմինները զուգահեռաբար կիրառվում են Սաղմ.90:13-ում: Պետք է լինի մեղքի ճանաչում՝ ընդունում և դրանից գիտակցաբար, անձնապես ետ դարձ, ինչպես նաև Աստծուն և Նրա արդարությունը փնտրելու փափագ (տես՝ Ես.1:16-20): Ապաշխարությունը ունի գիտակցական, անձնական և բարոյական ասպեկտներ: Բոլոր երեքն էլ պահանջվում են, որպեսզի թե՛ նոր փոխհարաբերություն սկսվի Աստծո հետ և թե՛ այս նոր փոխհարաբերությունը պահպանվի: Չղջման խորը զգացումը վերածվում է Աստծո հանդեպ և Նրա համար հարասուևող նվիրումի:

## ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅՈՒՆ SPECIAL TOPIC: PERSEVERANCE

Դժվար է բացատրել աստվածաշնչյան այն վարդապետությունները, որոնք կապված են Քրիստոնեական ապրելակերպի հետ, քանի որ դրանք ներկայացված են տիպիկ արևելյան, բարբառային զուգակցությամբ: Այս զուգակցումները կարծես թե հակասական են, սակայն դրանց երկու բևեռներն էլ աստվածաշնչյան են: Արևմտյան Քրիստոնյաները հակված են ընտրելու մի ճշմարտությունը և անտեսելու կամ թերագնահատելու հակառակ ճշմարտությունը: Ահա մի քանի օրինակներ՝

1. Արդյո՞ք փրկությունը Քրիստոսին վստահելու առաջին՝ սկզբնական որոշումն է, թե աշակերտ լինելու ցմահ՝ ամբողջ կյանքի ընթացքում նվիրումը:
2. Արդյո՞ք փրկությունը ամենակալ Աստծո շնորհքի միջոցով ընտրված լինելն է, թե աստվածային այդ հրավերին՝ առաջարկին հավատքով և զոջումով մարդու կողմից տրված պատասխան:
3. Արդյո՞ք փրկությունը, երբ ընդունվում է մարդու կողմից, այլևս անհնար է կորցնել, թե կարիք կա ջանք անել հարատևելու մեջ:

Հարատևության խնդիրը եկեղեցու ամբողջ պատմության ընթացքում մշտապես առկա է եղել: Խնդիրը սկսվում է ՆԿ-ի թվացյալ կոնֆլիկտային հատվածներով՝

1. փրկության վստահության վերաբերյալ տեքստերը՝
  - ա. Հովհաննեսի ավետարանում Հիսուսի խոսքերը (Հովհ.6:37, 10:28-29)
  - բ. Պողոսի խոսքերը (Հռոմ. 8:35-39, Եփես.1:13, 2:5,8-9, Փիլ.1:6, 2:13, 2 Թեսաղ.3:3, 2 Տիմ.1:12, 4:18)
  - գ. Պետրոսի խոսքերը (1 Պետ.1:4-5)
2. Հարատևության անհրաժեշտության շուրջ տեքստեր՝
  - ա. Հիսուսի խոսքերը Համանման Ավետարաններում (Մատթ.10:22, 13:1-9,24-30, 24:13, Մարկ. 13:13)
  - բ. Հիսուսի խոսքերը Հովհաննեսի Ավետարանում (Հովհ.8:31, 15:4-10)
  - գ. Պողոսի խոսքերը (Հռոմ.11:22, 1 Կորնթ.15:2, 2 Կորնթ.13:5, Գաղ.1:6, 3:4, 5:4, 6:9, Փիլ.2:12, 3:18-20, Կող.1:23, 2 Տիմ.3:2)
  - դ. Եբրայեցիների հեղինակի խոսքերը (2:1, 3:6,14, 4:14, 6:11)
  - ե. Հովհաննեսի խոսքերը (1 Հովհ.2:6, 2 Հովհ.9, Հայտն.2:7,17,26, 3:5,12,21, 21:7)

Աստվածաշնչյան փրկությունը բխում է ամենակալ Երրորդության Աստծո սիրուց, ողորմությունից և շնորհքից: Ոչ մի մարդ չի կարող փրկվել առանց Սուրբ Հոգու նախաձեռնության (տես՝ Հովհ.6:44,65): Աստված առաջինն է գալիս և սահմանում կարգը, սակայն պահանջում է, որ մարդիկ պատասխանեն հավատքով և ապաշխարությամբ, թե՛ սկզբում և թե՛ հարատևորեն: Աստված աշխատում է մարդկանց հետ ուխտի փոխհարաբերության մեջ: Կան արտոնություններ և պատասխանատվություններ:

Փրկությունը առաջարկվում է ամբողջ մարդկությանը: Հիսուսի մահը լուծեց մեղավոր մարդկության մեղքի հարցը: Աստված մի ճանապարհ է պատրաստել և կամենում է, որ բոլոր նրանք, որ ստեղծված են Իր պատկերով արձագանքեն Իր սիրուն և Հիսուսի մեջ մեզ տրված փրկությանը: Եթե կամենում եք այս թեմայի շուրջ ավելի շատ իմանալ, կարդացեք՝

1. Դեյլ Մուդի, *Ճշմարտության Խոսքը* (Dale Moody, *The Word of Truth*, Eerdmans, 1981 (էջ՝ 348-365)



2. Հովարդ Մարշալ, *Աստծո Չորությունը Պահված*, (Howard Marshall, *Kept by the Power of God*, Bethany Fellowship, 1969)

3. Ռոբերտ Շանք, *Կյանք Որդու մեջ* (Robert Shank, *Life in the Son*, Westcott, 1961)

Այս ոլորտում Աստվածաշունչը երկու տարբեր խնդիրներ է մատուցում. (1) փրկության վստահությունը անպտուղ, եսասիրական կյանք ապրելու համար որպես անցառույթ օգտագործելը, կամ (2) նրանք, որ ծառայության կամ անձնական մեղքի հետ կապված խնդիրների մեջ են, քաջալերելը: Խնդիրն այն է, որ սխալ խմբեր ընդունում են սխալ պատգամներ և աստվածաշնչյան մի քանի՝ սահմանափակ հատվածների հիման վրա կառուցում են աստվածաբանական համակարգեր: Որոշ Քրիստոնյաներ կարիք ունեն փրկության վստահության, մինչդեռ ոմանց անհրաժեշտ է հարատևության համար խիստ զգուշացում: Ո՞ր խմբին եք դուք պատկանում:

Գոյություն ունի պատմական աստվածաբանական մի հակամարտություն, որի մեջ ներգրավված են Օգոստինոսն ընդդեմ Պելագիոսի և Կալվինն ընդդեմ Արմենիանիզմի (հակապելագյան): Խնդրի մեջ առկա է փրկության հարցը. եթե մեկը իրոք փրկված է, պե՞տք է արդյոք հարատևի հավատքի և պողաբերության մեջ:

Կալվինիստները պաշտպանում են աստվածաշնչյան այն տեքստերը, որոնք ընդունում են Աստծո ամենակալությունն ու պահող գործությունը (Հովհ.10:27-30, Հռոմ.8:31-39, 1 Հովհ.5:13,18, 1 Պետ.1:3-5) և Եփես.2:5,8-ի պես ՎԱՂԱԿԱՏԱՐ Ժամանակի ԿՐԱՎՈՐԱԿԱՆ սեռի ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ԲԱՅԻ Ժամանակները:

Հայերը պաշտպանում են աստվածաշնչյան այն տեքստերը, որոնք զգուշացնում են հավատացյալներին «պահել», «ամուր բռնել» կամ «շարունակել» (Մատթ.10:22, 24:9-13, Մարկ. 13:13, Հովհ.15:4-6, 1 Կորնթ.15:2, Գաղ.6:9, Հայտն.2:7,11,17,26, 3:5,12,21, 21:7): Ես անձնապես չեմ հավատում, որ Եբրայեցիներ 6 և 10 գլուխները կիրառելի են, սակայն շատ Հայեր կիրառում են դրանք որպես զգուշացումներ հավատուրացության դեմ: Մատթեոս 13 և Մարկոս 4-ում Սերմնացանի Առակը դիտարկում է տեսանելի՝ ակնհայտ հավատքի հարցը, ինչպես Հովհ.8:31-59-ը: Ինչպես Կալվինիստները ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԵՐԸ են մեջբերում, որոնք կիրառվել են բնութագրելու փրկությունը, այնպես էլ Հայերը մեջբերում են ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ բայերով հատվածները, ինչպիսիք են 1 Կորնթ.1:18, 15:2, 2 Կորնթ.2:15:

Սա հստակ՝ կատարյալ օրինակ է, թե ինչպես են աստվածաբանական համակարգերը չարաշահում մեկնաբանության տեքստային ապացույցով մեթոդը: Սովորաբար հիմք հանդիսացող որևէ սկզբունք կամ հիմնական տեքստ է կիրառվում աստվածաբանական որևէ ցանց կառուցելու համար, որի միջոցով դիտարկվում են բոլոր մյուս տեքստերը: Չգույշ եղե՞ք ցանկացած տեսակի ցանցերից: Դրանք ծագում են արևմտյան տրամաբանությունից և ոչ թե հայտնությունից: Սակայն Աստվածաշունչը արևելյան գիրք է: Այն ներկայացնում է ճշմարտությունը լարվածությամբ լի, թվացյալ պարադոքսալ զուգակցությամբ: Քրիստոնյաները կանչված են հաստատելու դրանք երկուսն էլ և ապրելու այդ լարվածության մեջ: ՆԿ-ը ներկայացնում է թե՛ հավատացյալի ապահովությունը և թե՛ հավատքի և աստվածապաշտության մեջ շարունակելու պահանջը: Քրիստոնեությունը նախ ապաշխարության և հավատքի պատասխան է, որին հաջորդում է ապաշխարության և հավատքի մշտական՝ շարունակ տրվող պատասխանը: Փրկությունը ապրանք չէ (երկինք տանող տոմս կամ հակահրդեհային ապահովագրության փաստաթուղթ), այլ փոխհարաբերություն: Այն որոշում և աշակերտություն է: ՆԿ-ում այն նկարագրվում է ԲԱՅԻ բոլոր ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՎ:

ԱՈՐԻՍՏ (ավարտված գործողություն), Գործք 15:11, Հռոմ.8:24, 2 Տիմ.1:9, Տիտ.3:5

ՎԱՂԱԿԱՏԱՐ (ավարտված գործողություն շարունակվող արդյունքներով), Եփես.2:5,8

ՆԵՐԿԱ (շարունակվող գործողություն), 1 Կորնթ.1:18, 15:2, 2 Կորնթ.2:15

ԱՊԱՌՆԻ (ապագայի դեպքեր կամ որոշակի՝ հատուկ դեպքեր), Հռոմ.5:8,10, 10:9, 1 Կորնթ.3:15, Փիլ.1:28, 1 Թեսաղ.5:8-9, Եբր.1:14, 9:28:

**7:12-13** Աստծո արձագանքը չապաշխարող մարդկանց այսպիսին է (տես՝ 2 Օր. 32:34-43)

1. Նա սրելու է իր սուրը (տես՝ Մաղմ. 17:13)
2. Նա լարել է Իր աղեղը (տես՝ Չաք. 9:13)
3. Նա պատրաստել է մահվան գործիքները

4. Իր կրակե նետերն է պատրաստել (տես՝ Սաղմ .38:2)  
Այս տերմինաբանությունը կապված է պատերազմի հետ: Սա աջակցում է համար 7-ին՝ անդրադառնալով ազգերին, ոչ միայն անհավատ իսրայելացիներին:

**7:14-16** Այս համարները այնուհանդերձ, կարծես թե կապ ունեն անձնական և ոչ թե ազգային թշնամիների հետ:

1. նա անօրենության երկունքի մեջ է (տես ստորև տրված գրառումը)
2. նա չարություն է հղացել (տես՝ Հոբ 15:35, Ես .59:4)
3. նա կեղծիք է ծնում
4. նա փոս է փորում, Սաղմ .7:15ա

(սրանք կարծես ծնելու և որսալու հետ կապված մի խումբ փոխաբերություններ են):

Բայց ուշադրություն դարձրեք հակադարձմանը (տես՝ Առակ .26:27, 28:10, Ժող .10:8):

1. նա ընկնում է իր փորած փոսի մեջ՝ Սաղմ .7:15բ, 57:6
2. նրա չարությունն իր իսկ գլխին է գալու՝ Սաղմ .7:16ա,բ

#### **7:14**

**NASB, NKJV**

**NRSV, JPSOA**

**NJB**

**REB**

«ամբարշտություն»

«չարիք»

«նենգություն»

«անօրենություն»

Այս ԳՈՅԱԿԱՆԻ (BDB 19) համար ոչ մի հարմար ԲԱՅ չկա: Այս արմատին համագոր ոչինչ չկա Սեմական լեզվախմբում: Այն կարելի է գտնել բանաստեղծական գրքերում՝ Սաղմոսներ, Հոբ և Առակաց:

Հնարավոր է այն ծագել է մի արմատից, որը մատնանշում է «իշխանություն» կամ «իշխանության չարաշահում» (NIDOTTE, հատոր 1, էջ՝ 310): Սա ատելի է ՅԱՀՎԵԻ համար (տես՝ Սաղմ .5:5, 11:5): Այն կարող է մատնանշել ուխտի անպատշաճ վարքագիծ՝

1. երկրպագության մեջ (տես՝ Եսայի 1:13, Չաբ .10:2)
2. քաղաքականության մեջ (տես՝ Եսայի 31:2)
3. դատարաններում (տես՝ Եսայի 10:1, 29:20)
4. պատերազմում (Սաղմ .56:7):

Այս տերմինը մատնանշում է մի սիրտ, որը հակառակությամբ է տրամադրված Աստծո և Նրա ժողովրդի հանդեպ:

#### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 7:17**

**<sup>17</sup>Գոհություն եմ մատուցելու ՏԻՐՈՋՆ Իր արդարության համեմատ, Սաղմոս եմ երգելու Բարձրյալ ՏԻՐՈՋ անվանը:**

**7:17 «Գոհություն եմ մատուցելու... սաղմոս եմ երգելու»** Այս երկուսն էլ ԸՂՁԱԿԱՆՆԵՐ են (երդումներ):

1. գոհություն մատուցել – BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՆՂՁԱԿԱՆ իմաստով
2. սաղմոս երգել – BDB 274, KB 273, *Piel* ԸՂՁԱԿԱՆ

NIDOTTE հատոր 2, էջ՝ 406, #3, առաջարկում է, որ «գոհության գոհերը» ընկերակցվում էին գովաբանությանը բառացի արտահայտություններով (այսինքն՝ երգերով, տես՝ Սաղմ .107:22, 116:17, Հովնան 2:9): Ողբի կամ սգի աղոթքները հաճախ պարունակում էին գովաբանություն և փառաբանություն (տես՝ Սաղմ .35:18, 43:4, 54:6, 56:12, 57:9, 69:30, 71:22, 109:30, 140:13, 142:7):

❖ **«ՏԻՐՈՋ անունը»** Տես Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵԻ անունը:

❖ «**Բարձրյալ**» Եբրայերեն այս անունը՝ *Elyon* (BDB 751 II) Սաղմոսներում հաճախ է կիրառվում որպես ՅԱՀՎԵԻ համար տիտղոս (տես՝ Ծննդ. 14:19, Թվոց 24:16, 2 Օր. 32:8, Սաղմ. 9:2, 18:13, 21:7, 46:4, 47:2, և այլն): Այն ծագել է «բարձր» կամ «վերին» բառից (BDB 751 I): Այն կապ ունի ՅԱՀՎԵԻ հետ Սաղմ. 47:2-ում, որտեղ համագոր է «մեծ Թագավոր ամբողջ երկրի վրա» խոսքին: Սաղմ. 9:2 և 92:1-ում կրկնվում է ճիշտ նույն արտահայտությունը, որը գրված է Սաղմ. 7:17-ում:

Քանանացիների պանթեոնում սա բարձրյալ աստծո անունն էր: Հնարավոր է, որ իսրայելացիները վերցրել են այս անունը (ինչպես որ վերցնում էին Բաբելոնի և Պարսկաստանի աստվածների անունները) որպես համոզելու՝ հաստատելու մի կերպ, որ իրենց Աստվածն է միակ և ճշմարիտ Աստվածը: Տե՛ս ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ:

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ո՞րն է «ՅԱՀՎԵԻ» և «*Էլոհիմի*» միջև աստվածաբանական տարբերությունը:
2. Որո՞նք են սաղմոսերգուին ուղղված իր թշնամիների մեղադրանքները Սաղմ. 7:3-4-ում:
3. Ի՞նչ է նշանակում այս արտահայտությունը. «Աստված քննում է սրտերն ու մտքերը»:
4. Բացատրե՛ք եբրայերեն «ապաշխարել» և հունարեն «ապաշխարել» բառերի միջև տարբերությունը:
5. Բացատրե՛ք «հակադարձման» գրականական հասկացությունը: Ինչո՞ւ է այն այդքան հաճախ հանդիպում Աստվածաշնչում: